Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է **Պատվիրատուի ղեկավարի որոշման բողոքարկման** հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ որոշումը, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. <<Արվադա Գրուպ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության՝ <<Արվադա Գրուպ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ <<Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի ժ/Պ Կարեն Ծառուկյանի 28.08.2025թ.-ի թիվ 800-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, **կարճել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով**:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Մամիկոն Սամվելի Սարգսյանին վերադարձնել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Որոշումն կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am